ՀԱՅՈՑ ԼԵԶՎԻ ԹԵՍՏ

ՀՐԱՀԱՆԳ

Ներկայացվում է քննության թեստի էլեկտրոնային բուկլետը: Թեստի առավելագույն միավորը 70 է:

Թեստը լրացնելու համար տրվում է 4 ժամ:

Ուշադրությո՛ւն. անհասկանալի ձեռագրով աշխատանքը չի ստուգվի:

Հաջորդ էջ անցնելու և հետ դառնալու համար կարող եք օգտվել ստեղնաշարի այն կոճակներից, որոնց վրա սլաքներ են պատկերված

Մաղթում ենք հաջողություն:

Հայոց լեզու (35 միավոր)

(1) 1. **Պարզե՛ք՝ ստորև տրված բառակապակցություններից որի՞ առաջին բաղադրիչը գործածված չէ փոխաբերական իմաստով:**

ա) Դեղձան մազեր:

բ) Ծով համբերություն:

գ) Կապույտ արյուն:

դ) Քար լռություն:

(1) **2. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ համանուններ կան:**

ա) Բամբուկի բարակ, ճկուն ցողունները կհավաքեն ու կմաքրեն տերևներից:

բ) Հզոր Արամի որդին՝ Արան, գեղեցիկ ու բարետես տղամարդ էր:

գ) Հիշում եմ, մարտ էր, երբ մարտն սկսելուն պես զինվորի շորերը հագավ:

դ) Քնքշաբույր գարունը կանցնի, նրան կհաջորդի շոգ ամառը:

(1) **3.** **Պարզե՛ք՝ թվարկված բառերից ո՞րն է ենթարկվում հնչյունափոխության:**

ա) Հանք:

բ) Ձիրք:

գ) Նետ:

դ) Վեպ:

(1) **4. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ կա ուղղագրական սխալ։**

ա) Ամուսինս աշխատանքից հոգնած տուն է եկել և առանց ընթրելու քնած է։

բ) Խարույկը հանգավ, բայց դեռ երկար ժամանակ շարունակեց ծխալ։

գ) Մենք պետք է շտապ փախչեինք և խուսափեինք այդ արհավրալից վայրից։

դ) Օհանի ձայնը դղրդալով սարե-սար անցավ ու հասավ սասունցիներին։

(1) **5. Կարդացե՛ք նախադասությունը.** *Խոսրով Մելիքզադեն այդ նազելի մանուկ բանաստեղծը վատ չի գրում, նրա տաղերը ազդու և ոգելից են:*

Տրված նախադասության մեջ սխալը կապված է.

ա) Խնդրառության հետ:

բ) Խոնարհման հետ:

գ) Կետադրության հետ:

դ) Հոլովման հետ:

(1) **6. Պարզե՛ք՝ թվարկվածներից ո՞րն է համակատար դերբայ։**

ա) Ասուլիս։

բ) Ավետիս։

գ) Բանալիս։

դ) Մեղրամիս։

(1) **7. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ է «տուն» բառը գործածվել որպես պարագա:**

ա) Մարգարը տուն մտավ ու կամացուկ մոտեցավ օրորոցին:

բ) Սա այն տունն է, որը կառուցել է վարպետ Առաքելը:

գ) Սոնան տունն ու բակը մաքուր ավլել, սպասում էր հյուրերին:

դ) Տունը գտնվում էր աղբյուրի սնարին, եկեղեցու կողքին:

(1) **8. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ է ենթական արտահայտված գոյականով:**

ա) Այս սերմի մեջ ամփոփված էր բնության մեծագույն հրաշքը:

բ) Բոլորն իրենց սրտի խոսքն էին ուզում ասել ուսուցչին:

գ) Ես ստեցի և իմ ասածից ամաչելով դուրս եկա լսարանից:

դ) Նա լսել էր նորեկի մասին և սպասում էր հանդիպման:

(1) **9. Տրված բառերից ո՞րն է հոգնակի թվում ստանում *-ներ* վերջավորություն:**

ա) Բառատետր:

բ) Ծանուցագիր:

գ) Պատմագիր:

դ) Ուլունքաշար:

(1) **10. Պարզե՛ք՝ ո՞ր նախադասության մեջ սխալ կա:**

ա) Բոլորն ակնդետ հետևում էին բեմում ծավալվող գործողությունների ընթացքին:

բ) Թեկուզ անունը Ծիրանի տափ էր, բայց ծիրանի ոչ մի ծառ չկար այնտեղ:

գ) Խոհեմությունն ու շրջահայաց դատողությունն ինձ պահել էր նրա բռունցքից:

դ) Սպիտակ հանդերձն ու սևաթույր մազերը խորհրդավոր էին դարձրել նրան:

(2) 11. **Աշակերտը գրել է.** *Մայրը զավակին գտել էր ու հիմա հսկում էր նրա բոլոր քայլերին։*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ։
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա։

(2) 12. **Աշակերտը գրել է.** *Նրանց երեք սենյականոց բնակարանը գտնվում էր քաղաքի կենտրոնում:*

- Ցո՛ւյց տվեք նրան՝ ինչպիսի սխալ է թույլ տրված նախադասության մեջ:
- Բացատրե՛ք աշակերտին՝ ինչ պետք է իմանա, որպեսզի նմանատիպ սխալ թույլ չտա:

(4) **13. Դուք պետք է աշակերտներին բացատրեք բայի սահմանական եղանակի ապակատար ներկա (սահմանական ապառնի) ժամանակաձևը:**

I – Նշե՛ք բայի սահմանական եղանակի ապակատար ներկա (սահմանական ապառնի) ժամանակաձևի կազմության վերաբերյալ երկու-երեք կանոն, որոնց պետք է տիրապետեն աշակերտները:

II – Բերե՛ք համապատասխան օրինակներ՝ ըստ բայի սահմանական եղանակի ապակատար ներկա (սահմանական ապառնի) ժամանակաձևի կազմության կանոնների:

(7) **14. Կարդացե՛ք ստորև բերված հատվածը.**

Բանաստեղծը ազատ է, նա չի պիտի լինի պատմության ստրուկը: Եթե նա ամենայն ճշտությամբ հետևի ճշմարտությանը, այլևս չի լինի նա ստեղծագործող, բայց միայն արտագրող: Նա մինչև անգամ շատ դեպքերում իրավունք ունի ոչնչացնելու պատմության փաստական ճշմարտությունը, որովհետև նրան պետք են գաղափարական ճշմարտություններ:

I – Ո՞րն է այս տեքստի բուն ասելիքը:

II – Ձևակերպե՛ք մեկական փաստարկ՝ մեկը տեքստում ներկայացված կարծիքը հաստատելու, մյուսը՝ հերքելու համար:

III – Շարադրե՛ք Ձեր դատողություններն այն մասին, թե որ փաստարկն է Ձեզ համար ընդունելի և ինչու:

Հաշվի՛ առեք, որ այս առաջադրանքի պատասխաններում Ձեր թույլ տված ուղղագրական, կետադրական, քերականական կամ ոճաբանական սխալի համար 1 միավոր կհանվի:

(10) 15. **Կարդացե՛ք աշակերտի գրավոր աշխատանքը և հետևե՛ք հետևյալ հրահանգներին.**

I – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ I չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ(ներ)։

II – Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ II չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակ(ներ)։

III – 1. Գնահատե՛ք աշակերտի աշխատանքը՝ ըստ III չափանիշի, գրե՛ք համապատասխան միավոր և բնագրից բերե՛ք համապատասխան օրինակներ։

2. Որոշե՛ք յուրաքանչյուր սխալի տեսակը (ուղղագրական, ձևաբանական, կետադրական, շարահյուսական)։

Գնահատման չափանիշներ

N	*Չափանիշներ*	*Չափանիշների պարզաբանում*	*Միավոր*
I	Դատողության հիմնավորում (փաստարկ և եզրակացություն)	ա) Դատողությունը հստակ փաստարկված է, փաստարկները հիմնավորված են համապատասխան օրինակներով: բ) Դատողությունը մասամբ է փաստարկված, հիմնավորված չէ համապատասխան օրինակներով կամ թույլ է տրված փաստացի սխալ: գ) Տեքստը ճիշտ չի հասկացվել, դատողությունը համոզիչ չէ, օրինակները նույնպես չեն համապատասխանում դատողությանը:	2 1 0
II	Բառապաշար և ոճ	ա) Միտքը ճիշտ և հստակ է ձևակերպված, ոճաբանական առումով սխալներ չկան: բ) Միտքը ճիշտ է ձևակերպված, բայց բառապաշարն աղքատ է, կամ հանդիպում են բառապաշարի հետ կապված և/կամ ոճաբանական թերություններ: գ) Միտքը հիմնականում հասկանալի է, բայց գրվածքի ոճը խրթին է, հանդիպում	2 1 0
III	Քերականություն (ձևաբանություն, շարահյուսություն, ուղղագրություն, կետադրություն)	ա) Այս կարգի սխալների թիվը երեքից ավելի չէ: բ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի չէ: գ) Այս կարգի սխալների թիվը վեցից ավելի է:	2 1 0

Աշակերտին տրված առաջադրանք.

Ժամանակակից տեխնոլոգիաները սահմանափակում են մարդուն, կորցնում նրա՝ նորը փնտրելու և բացահայտելու ցանկությունը:

Փաստարկված դատողությամբ հաստատե՛ք կամ հերքե՛ք բերված կարծիքը:

Աշակերտի շարադրությունը

Հասարակության մեջ կա կարծիք, որ դպրոցում ավելի շատ ուշադրություն պետք է հատկացվի գործնական հմտությունների զարգացմանը, քան ակադեմիական առարկաների վրա: Այս դիրքորոշման հետ, սակայն, ես համաձայն չեմ: Մարդու ինտելեքտուալ զարգացման, քննադատական մտածողության և ապագա մասնագիտական հաջողության հիմքն ակադեմիական առարկաներն են:

Դպրոցն այն միջավայրն է, որտեղ երեխաները ստանում են հիմնական գիտելիքներ տարբեր առարկաներից և դրանով ընդլայնում իրենց ընդհանուր կրթությունը: Ճիշտ է գործնական հմտությունները կարևոր են, բայց դրանք կարելի է ձեռքբերել ընտանիքում, հասարակությունում: Սոցիալական հմտություններ մենք կարող ենք երեխաների մոտ զարգացնել նաև տարական դասարաններում, սակայն ակադեմիական կրթությունը բացառապես գործնական հմտություններով փոխարինելու դեպքում մենք վնաս ենք հասցնում երեխայի՝ ապագա մասնագետ զարգացմանը:

Բացի այդ, ակադեմիական առարկաներն ինքնին զարգացնում են անհրաժեշտ հմտություններ՝ տրամաբանական մտածողություն, խնդրի լուծում և աշխատանքային կարգապահություն, ուստի դպրոցի առաջնային նպատակը պետք է լինի ակադեմիական կրթությունը, իսկ գործնական հմտությունները կարող է զարգանալ լրացուցիչ ուղիներով, կյանքի տարբեր փուլերում զուգահեռաբար:

Հայ գրականություն (20 միավոր)

(1) **16. Ո՞ր ստեղծագործությունն է ժամանակագրական առումով Ագաթանգեղոսի «Հայոց պատմության» շարունակությունը:**

ա) Եղիշե, «Վասն Վարդանա և հայոց պատերազմին»:

բ) Ղազար Փարպեցի, «Հայոց պատմություն»:

գ) Մովսես Խորենացի, «Հայոց պատմություն»:

դ) Փավստոս Բուզանդ, «Հայոց պատմություն»:

(1) **17. Աշակերտը հարցնում է.** *«Ինչո՞ւ է որոշ ձեռագրերում Վարդան Այգեկցու առակների ժողովածուն «Աղվեսագիրք» կոչվում»։*

Ո՞ր տարբերակը կօգտագործեք աշակերտին պատասխանելու համար։

ա) Առակներից շատերում աղվեսը հանդես է գալիս որպես գլխավոր հերոս և խորամանկության խորհրդանիշ է։

բ) Առակներում աղվեսը իր խորամանկությամբ, հնարամտությամբ և հմտությամբ միշտ հաղթում է չարին։

գ) Առակներում աղվեսին բնութագրելու համար հաճախ կիրառվում են գեղարվեստական տարբեր միջոցներ։

դ) Միջնադարյան առակների հեղինակների համար աղվեսը ամենատարածված այլաբանական կերպարն էր։

(1) **18. Նահապետ Քուչակի անունով մեզ հասել են.**

ա) Կաֆաներ:

բ) Հայրեններ:

գ) Սոնետներ:

դ) Տաղեր:

(1) **19. Վիպական ո՞ր հերոսներն են հայրական անեծքի պատճառով դատապարտվում անմահության.**

ա) Աժդահակը և Բաղդասարը:

բ) Արա Գեղեցիկը և Մեծ Միհրը:

գ) Արտավազդը և Փոքր Միհրը:

դ) Վահագնը և Սանասարը:

(1) **20. Սայաթ-Նովայի շիրիմը գտնվում է.**

ա) Երևանի Կոմիտասի անվան պանթեոնում:

բ) Թբիլիսիի Խոջիվանքի պանթեոնում:

գ) Թբիլիսիի Սուրբ Գևորգ եկեղեցու բակում:

դ) Հաղպատի վանքի գերեզմանոցում:

(1) 21. **Անձնավորումը՝ որպես ոճական հնար, Ռափայել Պատկանյանի ո՞ր ստեղծագործությանն է բնորոշ:**

ա) «Աղասու մոր երգը»:

բ) «Արաքսի արտասուքը»:

գ) «Գինի և ջուր»:

դ) «Վարդանի երգը»:

(1) 22. **Ո՞ւմ է գնահատել Ռաֆֆին հետևյալ խոսքերով.** *«Դուք այն բանաստեղծներեն եք, որոնց մեջ մշտավառ կա հին մարգարեների աստվածաշունչ ոգին… ինչ խոսքս երկարացնեմ, դուք Մեսիա բանաստեղծներից եք, որին մենք ցարդ պտրում էինք և չէինք գտնում»:*

ա) Միքայել Նալբանդյանին:

բ) Պետրոս Դուրյանին:

գ) Ռափայել Պատկանյանին:

դ) Սայաթ-Նովային:

(1) **23. Ի՞նչ ընդհանուր գծեր են բնորոշ Նար-Դոսի ստեղծագործությունների մեծ մասին։**

ա) Նա իդեալականացնում է քաղաքային կյանքն ու կենցաղը՝ դրանք հակադրելով գյուղերգությանը։

բ) Նա կյանքը ռեալիստորեն է ընկալում և ճշմարտացիորեն արտացոլում է մարդկանց հոգեբանությունը։

գ) Նրա հերոսները կտրված են իրական աշխարհից և կյանքը ընկալում են սեփական երազների ճանապարհով։

դ) Նրա պատմվածքներում սիրո և հավատարմության թեմաները կենտրոնական տեղ են գրավում։

(1) **24. Ո՞ր ժանրի ստեղծագործություն է Շիրվանզադեի «Պատվի համար»-ը:**

ա) Դրամա:

բ) Կատակերգություն:

գ) Մելոդրամա:

դ) Ֆարս:

(1) **25. Ստորև թվարկվածներից ո՞րն է բնութագրում Ալեքսանդր Շիրվանզադեի «Հրդեհ նավթագործարանում» պատմվածքի հերոս Մեհրաբին.**

ա) Մարդ, որը տիրոջ նկատմամբ սերը գերադասեց սեփական ընտանիքից:

բ) Մարդ, որի անփութության պատճառով գործարանում հրդեհ էր բռնկվել:

գ) Ողբերգական անձնավորություն, ով հնազանդությունը ամեն ինչից վեր դասեց:

դ) Չարագուշակ լրաբեր, որը կուտակված վրեժն էր լուծում աղայից:

(1) **26. Բանաստեղծության ո՞ր տեսակն է բնութագրվում հետևյալ հատկանիշներով.** *կազմված է ութ տողից, առաջին տողը նույնությամբ կրկնվում է որպես չորրորդ և յոթերորդ տող, իսկ երկրորդ տողը՝ որպես ութերորդ:*

ա) Գազել:

բ) Հայրեն:

գ) Սոնետ:

դ) Տրիոլետ:

(1) **27. Ո՞ւմ մասին է գրել Եղիշե Չարենցը.** *«Արև է երգել ու գարուն այդ հիվանդ հանճարեղ պատանին»:*

ա) Միսաք Մեծարենցի մասին:

բ) Պետրոս Դուրյանի մասին:

գ) Սիամանթոյի մասին:

դ) Վահան Տերյանի մասին:

(1) **28. Պարույր Սևակը «Երգ երգոց» պոեմի յուրաքանչյուր գլուխ սկսում է աստվածաշնչյան բնաբաններով:**

Ինչպե՞ս կարելի է բացատրել դա:

ա) Բանաստեղծը խոսում է միայն աստվածային սիրո մասին և համապատասխանաբար մեջբերումներ է անում Աստվածաշնչից:

բ) Բանաստեղծը ցույց է տալիս, որ սերը՝ որպես կենտրոնական գաղափար, ոչ միայն անձնական զգացում է, այլ նաև համամարդկային արժեք:

գ) Բանաստեղծը ցույց է տալիս, որ սերը պայքար է պահանջում, և ի վերջո այս տառապանքները հոգեպես մաքրում են մարդուն:

դ) Բանաստեղծն այս եղանակին է դիմում, քանի որ բանաստեղծության գլխավոր հերոսուհին աստվածաշնչյան կերպար է:

(1) **29. Գուրգեն Մահարու «Պատանեկություն» վիպակում ո՞ր փուլն է պատկերված։**

ա) Հայկական քաղաքական ուժերի գործունեությունն ու մարդկանց դժգոհությունը Վանում:

բ) Ճամբարային ու սիբիրյան կյանքը, երբ «փշալարերը» կարող էին «ծաղկած» լինել:

գ) Վանի կռիվներն ու գաղթը, մահվան արհավիրքին բախվող ռոմանտիկական երազները:

դ) Վանում հաստատված ընտանեկան հարաբերությունները, կենցաղն ու տատի կերպարը:

(1) 30. Ո՞րն է Ավետիք Իսահակյանի «Աբու-Լալա Մահարի» պոեմի գլխավոր հերոսի խորհրդանշական վերջին հանգրվանը:

ա) Անապատը:

բ) Աստղերը:

գ) Արևը:

դ) Բաղդադը:

(1) **31. Թվարկվածներից ո՞վ է գրական գործունեությունը սկսել եվրոպական լեզուներով, իսկ հայերենով սկսել է գրել ավելի ուշ։**

ա) Կոստան Զարյանը։

բ) Համո Սահյանը։

գ) Պարույր Սևակը։

դ) Ռափայել Պատկանյանը։

(1) **32. Եղիշե Չարենցը «Անքնություն» բանաստեղծության մեջ գրում է.**

«Դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են, դոփո՛ւմ են ձիերը,
Մթի մեջ դոփում են, խփում են պայտերը,
Պայտերը խփում են, խփում են հողին,
Անծա՛յր է գիշերը, անհայտ է ուղին:»:

Գեղարվեստական ո՞ր միջոցն է կիրառված բանաստեղծության մեջ:

ա) Այլաբանություն:

բ) Բաղաձայնույթ:

գ) Համեմատություն:

դ) Նվազաբերություն:

(1) **33. Հրանտ Մաթևոսյանի «Նարինջ զամբիկ» պատմվածքում նարինջ զամբիկը խորհրդանիշ է՝**

ա) Այն բարեկամության ու հավատարմության, որը հաճախ ձևավորվում է մարդու և կենդանու միջև:

բ) Այն երազանքների ու իդեալների, որոնք մարդիկ հաճախ կորցնում են՝ բախվելով կոպիտ իրականությանը:

գ) Այն խաղաղության ու ներքին ներդաշնակության, որը ոչ մի մարդկային հակամարտություն չի խաթարում:

դ) Այն փառքի ու հաջողության, որին մարդը կարող է հասնել իր քրտնաջան աշխատանքի շնորհիվ:

(1) **34. Վարդգես Պետրոսյանի «Հայկական էսքիզներ» գրքում իմաստավորված են՝**

ա) Առասպելական անցյալը, պատմական ներկան և անկանխատեսելի ապագան:

բ) Բնության և մարդու փոխհարաբերությունները:

գ) Երիտասարդների կյանքն ու նրանց զգացմունքները:

դ) Խորհրդային Հայաստանի և սփյուռքահայության կյանքն ու պատմությունը:

(1) **35. Ո՞ւմ է բնութագրում Հրանտ Մաթևոսյանը հետևյալ խոսքերով.** *«Հայ ընթերցողի համար նրա հայտնությունը իրական պարգև է: Կարդում եմ նրա գործն ու հաճախ երանի եմ տալիս նրան. բաներ, որ ես էի կռահում, միայն կռահում էի, իր համար այբուբեն են. բաներ, որ ես հրճվանքով որպես գյուտ էի անելու, իր համար սովորական իրողություններ են: Կյանքը գիտի և գիտի՝ գրականությունն ինչ է»:*

ա) Աղասի Այվազյանին:

բ) Լևոն Խեչոյանին:

գ) Հակոբ Կարապենցին:

դ) Վահագն Դավթյանին:

Գեղարվեստական տեքստի ըմբռնում (15 միավոր)

Ուշադիր կարդացե՛ք Հրաչյա Քոչարի «Կարոտ» ստեղծագործությունից բերված հատվածը.

Հայաստանի Պետքաղվարչության նախագահը իր առանձնասենյակում նստած՝ անհամբեր սպասում էր քննիչներին: Նա պիտի հենց հիմա ծածկագրով հայտներ Անդրկովկասյան իր պետին Առաքել Էլոյանի հարցաքննության առաջին արդյունքները: Նախագահին ու իր բոլոր տեղակալներին հույժ զարմացնում էր այն փաստը, թե պետական սահմանը խախտող, Թուրքիայում ապստամբ քրդերի գործողություններին միացած այդ մարդն ինչո՞ւ էր ինքնակամ վերադարձել Խորհրդային Հայաստան: Ջանում էին կռահել, թե նրա այդ քայլի մեջ ի՞նչ խորամանկ նպատակ է թաքնված, ինչպե՞ս է նա մտադիր մոլորության մեջ գցելու պետական անվտանգության աշխատողներին...

– Ես քեզ խնդրում եմ, որ մեր բոլոր հարցերին ճիշտ պատասխանես, եթե ուզում ես ազատվել, եթե տղաներիդ մասին մտածում ես: Վա՜յ քեզ, Առաքել Էլոյան, եթե փորձես խաբել:

– Թե սուտ ըսիմ, ընկեր ջան, հավուր դատաստանին հոգով, մարմնով պարտական եղնիմ, սուրբ հողին չարժանանամ, գել ու գազանի բաժին եղնիմ…

– Այ, էդպես էլ պայման անենք: Համաձա՞յն ես:

– Համաձայն իմ:

– Դե հիմա ասա՝ ո՞վ քեզ ուղարկեց Թուրքիա… Այս հարցի պատասխանիցդ կերևա՝ճշմարտախոս ես, թե չէ: Ովքե՞ր քեզ ուղարկեցին Թուրքիա:

Առաքելը նայեց պետին, մտածեց, խորը հառաչեց.

– Ո՞վ ուղարկեց…

– Այո։

– Իմ սիրտ… Իմ սիրտ ընձի ըսեց՝ գնա, Առաքել, քո երկիր տես, արի։ Մեղավոր իմ սիրտն է…

– Առաքել բիձա։

– Հա, մատաղ։

– Ինձ մի խաբիր, Առաքել բիձա…

– Հազար ամոթ ընձի ու իմ գերդաստանին, թե կխաբիմ։

– Ինչի՞ համար գնացիր Թուրքիա։

– Երկրին կարոտցեր ենք…

– Կարոտի համար կերթա՞ն։

– Կերթան։

– Բա ուրիշներն ինչո՞ւ չգնացին, դու գնացիր։

– Իմ սիրտ թուլ է… Ուրիշների սրտեր ուժեղ ին…

– Բա ինչո՞ւ վերադարձար։

– Իմ ազգ էստեղ է, իմ գերդաստան էստեղ է։ Հայաստան հիմի էստեղ է…

– Որ Հայաստանն էստեղ է, ի՞նչ գործ ունեիր էնտեղի հետ, - հարցրեց նախագահը։

– Իմ սրտին ըսե, մատաղ…

– Մարդիկ խելքո՞վ պիտի շարժվեն, թե սրտով…

– Ես ուսում ու գաղափար չունեմ, ես սիրտ ունեմ, որ խոսք ու խրատ չհասկնա… Որ կարոտցավ՝ կծռի, որ ծռավ՝ օրենք ու սահման կմոռնա…

Նախագահը լսում էր նրա ամեն մի խոսքը, զննում էր ամեն մի փոփոխություն նրա դեմքի վրա, հայացքում, շարժումների մեջ։

– Այդ կարոտը պիտի մոռանալ, – խրատական եղանակով, կարծես փորձելու համար, հանգիստ ասաց նա։

– Չմոռցվի՛, – համոզված ու անմիջական պատասխանեց Առաքելը։

– Դու գուցե չմոռանաս, բայց քո տղաները, նոր եկող սերունդը կմոռանան։

Առաքելը ծանր հառաչեց.

– Չեմ հավատա։ Կարոտ թոնդրի մոխրի տակ մնացած անթեղ կրակ է։ Կարծես հանգեր է, չի երևա։ Թոնդիր պաղեր է։ Բայց որ մոխիր բացես, անթեղ կրակ կերևա, կկայծկլտա… Անթեղ կրակ չմարի, կապրի։ Կրակ արդարություն է, անմահ է… Կարոտն լե չմարի կրակի պես։ Նոր սերունդ կանաչ է, խակ է, քանի կանաչ է, արմատ լե թաց է, որ հասնի, կարմրի, կծարվնա… Կարոտ կրակ է, ծարավ է։

Նախագահը չէր միջամտում։ Եվ Առաքելը խոսում էր։ Երբեք այդքան ասող-խոսող չէր եղել նա։

Հիմա նա տասնամյակներով լցված իր սիրտն էր դատարկում։

Օգտվելով կարճատև լռությունից, Առաքելը նախագահին հարցրեց.

– Ներողություն կենիս, ընկեր։ Դո՞ւ որտեղացի իս…

Նախագահը ներողամտաբար ժպտաց.

– Հիմա էլ նա է ինձ հարցաքննո՞ւմ… Ծնողներս արզրումցի են։

– Իյա՛, – զարմացավ Առաքելը, – մեր Ալաշկերտ լե Արզրումի վիլայեթի մեջ կմտներ… Արզրումցի՞ իս։ Մատաղ եղնիմ Արզրումու Բինգյոլի ջրերուն։ Բա դու չկարոտնա՞ս Բինգյոլի աղբյուրներուն, մատա՛ղ…

Նախագահը հիմա, լուռ ծխելով, մտածում էր։ Երևում էր, Առաքելը տպավորություն է գործել նրա վրա։

– Կհարցուս, ինչի՞ ետ դարձա եկա, – շարունակեց Առաքելն՝ այս անգամ առանց հարցի սպասելու, – իմ ծանոթ քրդեր հայտնեցին, թե Քեմալի կառավարության մարդիկ ման կուգան, որ բռնեն ընձի: Պատմեցին, որ Ստալին Քեմալին ասեր է՝ Առաքելին կտաս՝ տուր, չե՞ս տա՝ իմ կռիվ քու հետ կռիվ է… Ես որ լսեցի էդ լուր, ասի՝ հորի՞ իմ պատճառով կռիվ-արունհեղություն էղնի, ու շուտ հելա եկա… Պիտի վերադառնենք, բայց էդ լուր լսեցի, մի օր շուտ եկա…

Առաքելը լռեց, ծնկներն ամուր հպելով իրար:

Նախագահն ու քննիչները երկար ժամանակ իրար հետ ռուսերեն էին խոսում: Առաքելը լսում էր այնպես հետաքրքիր, կարծես հասկանում էր: Երկար խոսեցին, հետո նախագահն ասաց.

– Առաքել ապի, ես հրամայում եմ քեզ, որ ինչ որ այնտեղ տեսել ես, լսել, ում հետ որ հանդիպել ես, ինչի մասին որ խոսել եք, որ տեղերը որ գնացել ես, բոլորի, բոլորի մասին պատմես, որ այս ընկերները գրեն: Համաձա՞յն ես…

Առաքելը վեր կացավ, անճկուն մարմնով մի անգամ էլ խոնարհվեց նախագահի առաջ: Կարծես թե նրա աչքերը լցվել էին, գորշ շրթունքները դողում էին:

– Նստիր, նստիր: Համաձա՞յն ես, ուրեմն: Ոչինչ չմոռանաս, ոչինչ բաց չթողնես: Խոսք տալի՞ս ես…

– Խոսք լե կիտամ, երթում լե կուտիմ, մատաղ…

– Դե, հիմա գնացեք…

Քննիչների հետ միաժամանակ ոտքի կանգնեց Առաքելն էլ, կարծես նախապես սովորեցրել էին: Նախագահը մոտեցավ, ձեռքը պարզեց Առաքելին, սեղմեց նրա ձեռքը, ու նրան թվաց, թե քարե մարդու քարե ձեռքն է բռնել իր ափով:

ՀՐԱՀԱՆԳ

Առաջադրանքը կատարելու համար ուշադի՛ր կարդացեք տեքստը: Հարցերին սկսե՛ք պատասխանել այն ժամանակ, երբ տեքստի բովանդակությունն ամբողջովին հասկանալի կլինի:

Տրված պատասխաններից ընտրե՛ք միայն մեկ պատասխան և պատասխանների թերթիկի համապատասխան վանդակում նշե՛ք «X» նշանով:

(1) 36. **Տեքստի առաջին պարբերությունում.**

ա) Հեղինակը ներկայացնում է Առաքելի հարցաքննության առաջին արդյունքները:

բ) Հեղինակը ներկայացնում է գլխավոր հերոսի արարքի հետ կապված կասկածները:

գ) Հեղինակը պատմում է երկրի քաղաքական անվտանգության մասին:

դ) Հեղինակը պատմում է Կովկասի քաղաքական իրավիճակի մասին:

(1) **37. Ո՞ր արտահայտության մեջ է հեղինակը կիրառում գեղարվեստական խոսքի միջոցներ:**

ա) «Բա դու չկարոտնա՞ս Բինգյոլի աղբյուրներուն»:

բ) «Ես ուսում ու գաղափար չունեմ, ես սիրտ ունեմ»:

գ) «Իմ ազգ էստեղ է, իմ գերդաստան էստեղ է»:

դ) «Կարոտ թոնդրի մոխրի տակ մնացած անթեղ կրակ է»:

(1) **38. Ի՞նչը դրդեց Առաքել Էլոյանին սահմանն ապօրինաբար անցնելուն։**

ա) Կորուսյալ հայրենի եզերքի կարոտը։

բ) Մանկության ընկերներին տեսնելու ցանկությունը։

գ) Սերունդների մասին հոգալու ցանկությունը։

դ) Քուրդ ծանոթների բերած լուրը։

(1) **39. Կարդացե՛ք նախադասությունը՝** *«Հիմա նա տասնամյակներով լցված իր սիրտն էր դատարկում»։*

Ի՞նչի վրա է հեղինակը կենտրոնացնում ուշադրությունը։

ա) Անցած կյանքի համար զղջման վրա։

բ) Անցյալի հետ կապը խզելու ցանկության վրա։

գ) Հարցաքննության հետ կապված ապրումների վրա։

դ) Հուզմունքի և հոգեբանական ծանր վիճակի վրա։

(1) 40. **Ո՞րն է Առաքել Էլոյանի վերադարձի հիմնական պատճառը։**

ա) Զավակների հանդեպ գործած մեղքի և զղջման զգացումը։

բ) Թերուսությունը և գիտելիքի պակասը։

գ) Թշնամուց փախչելու և փրկվելու ցանկությունը։

դ) Իր ժողովրդի և ընտանիքի հետ լինելու ցանկությունը։

(1) **41. Ինչպիսի՞ հատկանիշներ են դրսևորվում նախագահի մոտ՝ տրված հատվածի համաձայն։**

ա) Անխոս հնազանդ է ռեժիմին։

բ) Արդար և օբյեկտիվ գնահատող է։

գ) Դժվարանում է բոլորի հետ «իրենց լեզվով» խոսել։

դ) Ճկուն և խորամանկ է հարաբերություններում։

(1) **42. Բնագրի համաձայն՝ ի՞նչ է նշանակում հետևյալ արտահայտությունը.** *«Դու գուցե չմոռանաս, բայց քո տղաները, նոր եկող սերունդը կմոռանան»։*

ա) Ապագա սերնդի արժեքները անցյալից են սկիզբ առնում։

բ) Գալիք սերունդը անտարբեր կլինի պատմական անցյալի նկատմամբ։

գ) Հին սերնդի հայրենասիրական ոգին անկոտրում և օրինակելի է։

դ) Հին սերունդը թույլ է իրադարձությունների օբյեկտիվ գնահատման հարցում։

(1) **43. Ինչպիսի՞ վերաբերմունք ունի նախագահը գլխավոր հերոսի նկատմամբ։**

ա) Հարցաքննության ժամանակ նա խիստ ու անողոք է Առաքելի նկատմամբ։

բ) Նա կասկածներով է լցված և փորձում է Առաքելին ստիպել խոստովանել հանցանքը։

գ) Նա կարեկցանքով է լեցուն Առաքելի հանդեպ և տպավորված է նրա խոսքերից։

դ) Նա օգտվում է Առաքելի թուլությունից և փորձում է ներգործել նրա վրա։

(1) **44. Ինչի՞ շնորհիվ Առաքելը կարողացավ տպավորություն գործել նախագահի վրա:**

ա) Անկայունության:

բ) Անկեղծության:

գ) Դիտավորության:

դ) Ինքնավստահության:

(1) **45. Ո՞րն է հեղինակի նպատակը։**

ա) Ներկայացնել Թուրքիայում բնակվող քրդերի ապստամբության շարժառիթը։

բ) Ներկայացնել հայրենի վայրերից տեղահանված մարդկանց ողբերգությունը։

գ) Նկարագրել հարցաքննվող տղամարդու հուզական, հոգեբանական վիճակը։

դ) Պատմել հասարակ մարդկանց նկատմամբ քննիչների վերաբերմունքի մասին։

(5) **46. Դատողությո՛ւն արեք տեքստի բուն ասելիքի շուրջ և Ձեր դատողությունը հիմնավորե՛ք համապատասխան փաստարկներով:**

Նկատի՛ ունեցեք, որ 50 բառից պակաս պատասխանը չի ստուգվի: